ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

02.03.2021թ.

ՈՐՈՇՈՒՄ 86-Ա

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 539-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի համայնքապետարանի աշխատակազմի Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բաժնի եզրակացությունը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավարի 2020 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Քարահունջ գյուղում գտնվող անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին» թիվ 539-Ա որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ:

1.1. Գառնիկ Մելքումյանին և Նինա Մելքումյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գորիս համայնքի Քարահունջ գյուղում գտնվող 0.03234 հա հողատարածքին, հողատարածքի վրա ինքնակամ կառուցված շինություններին / 312.5քմ բնակելի տուն, 29.5քմ մառան և 2.1քմ մակերեսով պարիսպ/ տրամադրել հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, Գորիս համայնք, գյուղ Քարահունջ, 6-րդ փողոց թիվ 10 տուն:

ԱՐԱՐԱՏ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2021/02/03
Ք.Գորիս